ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2001-Լ	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Հրապարակվել է միասնական կայքում 16.12.20	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	10.12.2020
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	14.12.2020
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	17.12.2020	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

11.11.21 N 1832-Լ որոշումն ունի անցումային դրույթ:
15.12.22 N 1927-Լ որոշումն ունի անցումային դրույթ:

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2020 թվականի N 2001-Լ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83-րդ հոդվածը և 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման իմաստով անհայտ կորած են համարվում Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետության պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարություններում, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում կամ ոստիկանությունում գրանցված՝ գտնվելու վայրն անհայտ անձինք:

(2-րդ կետը փոփ. 27.01.21 N 103-Լ)

3. Սահմանել, որ սույն միջոցառման ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցները Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին է տրամադրում սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում 500,000.0 հազար դրամի չափով, որից հետո՝ եռամսյա պարբերականությամբ՝ հիմք ընդունելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի ներկայացրած հաշվետվությունը սույն միջոցառման շրջանակներում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ:

4**l** Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 17–ը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին աջակցություն տրամադրելու կարգը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

14.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 10-ի N 2001-Լ որոշման

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին (այսուհետ՝ շահառու):

2. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամյա դրամական վճարի ձևով՝ յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի հաշվով ամսական 300 000 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև 2022 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսները ներառյալ՝ սկսած սույն միջոցառումը հաստատելու ամսվանից:

(2-րդ կետը փոփ. 10.06.21 N 973-Լ, 11.11.21 N 1832-Լ, 17.03.22 N 317-Լ, 14.07.22 N 1071-Լ, 29.09.22 N 1513-Լ, 03.11.22 N 1685-Լ, 15.12.22 N 1927-Լ)

3. Ամենամյա դրամական վճարի տրամադրումն իրականացվում է Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով:

4. Ամենամյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է, եթե՝

1) անհայտ կորած զինծառայողը ճանաչվել է հիմնադրամի շահառու՝ շահառու ճանաչվելու ամսվա 1-ից.

2) հայտնի է դարձել զինծառայողի գտնվելու վայրը կամ դադարել են զինծառայողին անհայտ կորած համարելու հիմքերը՝ հայտնի դառնալու կամ դադարելու ամսվա 1-ից.

3) ամենամյա դրամական վճարը վճարվել է մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ՝ 2023 թվականի հունվարի 1-ից.

4) ***(ենթակետն ուժը կորցրել է 27.01.21 N 103-Լ)***

(4-րդ կետը փոփ. 27.01.21 N 103-Լ, 10.06.21 N 973-Լ, 11.11.21 N 1832-Լ, 17.03.22 N 317-Լ, 14.07.22 N 1071-Լ, 29.09.22 N 1513-Լ, 03.11.22 N 1685-Լ, 15.12.22 N 1927-Լ)

5. Անհայտ կորած զինծառայողին հիմնադրամի շահառու ճանաչելու դեպքում սույն միջոցառման համաձայն վճարված գումարները նվազեցվում են շահառուին հիմնադրամից վճարման ենթակա միանվագ գումարից:

(5-րդ կետը փոփ. 10.06.21 N 973-Լ)

6. Եթե ամենամյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի հիման վրա, ապա վճարված գումարները շահառուից հետ չեն պահանջվում և դիտարկվում են որպես հիմնադրամի ծախս:

7. ***(կետն ուժը կորցրել է 27.01.21 N 103-Լ)***

(հավելվածը փոփ. 27.01.21 N 103-Լ, 10.06.21 N 973-Լ, 11.11.21 N 1832-Լ, 17.03.22 N 317-Լ, 14.07.22 N 1071-Լ, 29.09.22 N 1513-Լ, 03.11.22 N 1685-Լ, 15.12.22 N 1927-Լ)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Է. Աղաջանյան